ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՏԱԿԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/05»

ք. Երևան «07» դեկտեմբերի 2017թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Դատական ավտոմատացված համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում 23 150 000 (քսաներեք միլիոն հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական

միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտավորությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագարով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դ. Անհաղթ 23/22, 0014
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝	Հ/Հ՝ 1570003653770100
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Մանուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« 07 » դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/05 » ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72261100/320	Հայաստանի Հանրապետության դատարաններում գործավարությունն իրականացվում է «Հայաստանի հանրապետության դատական ավտոմատացված համակարգ» կառավարման ծրագրի միջոցով (այսուհետև՝ ԴԱՀ): ԴԱՀ-ի աշխատանքն ապահովվում է ՀՀ տարածքում գործող դատարաններում տեղաբաշխված ոչ ավել քան 95 սերվերների միջոցով (ցանկը՝ ստորև): ԴԱՀ-ի սերվերներիև ծրագրերի սպասարկում Ապահովել ՀՀ դատական համակարգում գործող «ԴԱՀ»-ի և նրա ենթահամակարգերի անխափան աշխատանքը՝ համակարգչային ծրագրային ապահովման միջոցով, ինչպես նաև կատարելով համապատասխան ծրագրային շտկումներ և փոփոխություններ դրանք համապատասխանեցնելով ՀՀ դատական դեպարտամենտից ստացված հանձնարարականներին, պահանջներին, օրենսդրական փոփոխություններին և ԴՆԽ-ի սահմանած առանձին դրույթներին. Դատական գործերի պատահական բաշխման (վերաբաշխման) էլեկտրոնային համակարգ Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում բաշխման ենթահամակարգեր՝ ըստ գործի տեսակների, Քաղաքացիական, Քրեական և Վարչական վերաքննիչ դատարաններում համապատասխան ենթահամակարգեր, Վճռաբեկ դատարանի ենթահամակարգեր, Դատական կազմերի ձևավորման և փոփոխման համակարգեր. ՀՀ վարչական դատարանում	դրամ	23150000	1	Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան – ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ – ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան – ք. Երևան, ԳարեգինՆժդեհի 23 Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարան - ք. Երևան, Գարեգին Նժդեհի23	**Ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 365 օրվա ընթացքում (սակայն ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը): Պայմանագրով նախատեսված

		ՀՀ վերաքննիչ դատարաններում ԴԱՀ-ի դատական գործերի համակարգ Կախված օգտագործողների հասանելիությունից, դատարանից և գործի տեսակից՝ Ստեղծման ենթահամակարգ, Դիտման ենթահամակարգ,Լրացման (ավելացման) ենթահամակարգ,Խմբագրման (հեռացման) ենթահամակարգ,Փնտրման ենթահամակարգ, ԴԱՀ-ի մատյանների համակարգ Մուտքային մատյաններ ենթահամակարգ,Ելքային մատյաններ ենթահամակարգ,Բողոքների մատյաններ ենթահամակարգ,Դիմումների մատյաններ ենթահամակարգ,Մատյանների փնտրման ենթահամակարգ, ԴԱՀ-ի անձնակազմի կառավարում Անձնական տվյալների ենթահամակարգ,Դատավարական ենթահամակարգ,Գնահատում ենթահամակարգ,Փնտրման ենթահամակարգ, ԴԱՀ-ի «ադմինիստրատոր» համակարգ Հաստիքների կառավարման ենթահամակարգ,Անձնական տվյալների տեղափոխման ենթահամակարգ,Օգտագործողների հասանելիության ենթահամակարգ,Դատական գործերի նկարագրության ենթահամակարգ,Փնտրման գործիքակազմի ենթահամակարգ ԴԱՀ-ի «ժամանակացույց» համակարգ Հանձնարարելու, հանձնարարականները վերահսկելու և դիտելու ենթահամակարգ ԴԱՀ-ի «նամակներ» համակարգ ԴԱՀ-ի միջոցով նամակներ ուղարկելու, ստանալու և կառավարելու ենթահամակարգ ԴԱՀ-ի «տեղեկատվություն» համակարգ ԴԱՀ-ում օգտագործողներին օգնելու, ուղորդելու և ճիշտ կողմնորոշվելու, ինչպես նաև նորություններ, հայտարարություններ տեղադրելու ենթահամակարգ ԴԱՀ-ի մոնիտորինգի համակարգ Հիմնական գործողությունների մոնիտորինգի ենթահամակարգեր,Փնտրման ենթահամակարգ,Հաշվետվությունների ենթահամակարգ ԴԱՀ-ի սերվերներում տեղադրված Էլեկտրոնային համակարգիծրագրային բաղադրիչների պարբերականվերաթարմացում, ինչպես նաև անհրաժեշտ ծրագրերի տեղադրում,սերվերների հսկում (մոնիտորինգ),ԴԱՀ սերվերների գերբեռնվածության ախտորոշում, սարքավորումների անսարքության հայտնաբերում, առաջացած խնդիրների լուծման տարբերակների քննարկում,լուծում: Անհրաժեշտության դեպքում սերվերների ծրագրային փաթեթների տեղակայում, կարգաբերում՝ ապահովելով դրանց համակցումը համակարգում գործող սերվերների միջև: Համակարգի տվյալների շտեմարանների պահուստային պատճենների ստեղծում (պահուստային սերվերներում և տրամադրված այլ կրիչներում՝օրական, շաբաթական ամսական կտրվածքով), տվյալներիշտեմարանների աշխատանքի մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում տվյալների շտեմարանների վերականգնում պահուստային պատճեններից: Վերարտադրման /ռեպլիկացիաների/ ստուգում: Պատվիրատուի պահանջով դրանում նշված օրվա դրությամբ համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում: Յուրաքանչյուր ամիս, մինչև ամսի 5-ը Սպասարկողը էլեկտրոնային եղանակով (պատվիրատուի կողմից սահմանված ձևով) պատվիրատուին է փոխանցում նախորդ ամսվա կատարված աշխատանքների մանրամասն նկարագրությունը, ծրագրի սպասարկման ընթացքում ի հայտ եկած խնդիրները և դրանց մասին				Հայաստանի Հանրապետության վարչական դատարան – ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23 Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարան – ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9 Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան- ք. Երևան, Տիգրան Մեծի 23/1 Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Նազարբեկյան թաղ. 40 Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Գյուլիքևխվյան 20 Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10 Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Արշակունյացպողոտա 24/1 Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Օտյանփողոց 53/2 Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական	կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

		հաշվետվություն(վիճակագրություն): Պատվիրատուի և սպասարկողի միջև փաստաթղթաշրջանառությունն (մասնավորապես՝ պատվիրատուի հանձնարարությունները և դրանց ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունն) իրականացնել էլեկտրոնային ծրագրի միջոցով, որի անվտանգությունը պետք է ապահովի սպասարկողը: Պահպանում է ծրագրային կոդի բոլոր փոփոխություններն ու սկզբնակոդի բոլոր վիճակները և փոփոխության դեպքում անմիջապես փոխանցում պատվիրատուին: Տվյալների բազայի գաղտնաբառի փոփոխության դեպքում անմիջապես գաղտնաբառի տրամադրում պատվիրատուին: Պատվիրատուի պահանջովհամակարգում պարբերաբարառաջացողխոտանված տվյալների մշակում և հեռացում: Անհրաժեշտության դեպքում տվյալների բազաներում իրականացվող հարցումների և ինդեքսների օպտիմալացում: Համակարգերի աշխատանքի ընթացքում առաջացող ծրագրային թերությունների և բացթողումների շտկում: Միջդատարանային կապի առկայության անընդմեջ ստուգում՝ խնդիրների առկայության դեպքում ինտերնետի օպերատորին և պատվիրատուին տեղեկացում: ԴԱՀ-ի սերվերների անվտանգության ապահովում՝ բացառելով չարտոնված մուտքերի հնարավորությունը՝բազմաշերտցանցային անվտանգություն (Firewall) ցանցային ներխուժման փորձերի ախտորոշման և արգելափակման ավտոմատացված համակարգի միջոցով: Անհրաժեշտության դեպքում կատարում է Layer 2 մակարդակի առանձնացված կապուղիով տվյալների տեղափոխման համար անհրաժեշտ կարգաբերումներ: Անհրաժեշտության դեպքում կատարել սերվերների ծրագրային ապահովման (օպերացիոն համակարգերի, Firewall և այլ անհրաժեշտ ծրագրերի) պարբերական թարմացում: Երևանի տարածքում սերվերների հետ առաջացած խնդիրները պետք է լուծվեն անհապաղ, ծայրահեղ դեպքում ոչ ուշ քան 5 ժամվա ընթացքում: Խնդրի կարգավորման մասին անմիջապես իրազեկելով պատվիրատուին: Մարզերում սերվերների հետ առաջացած խնդիրները պետք է լուծվեն անհապաղ, ծայրահեղ դեպքում ոչ ուշ քան 2 օրացուցային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում սերվերների տեղափոխումը իրականացնել՝ ապահովելով սերվերների տվյալների անվտանգությունը: ԴԱՀ-ի բազայից տվյալների պարբերաբար և անխափան ավտոմատ փոխանցման ապահովում համապատասխանաբար «Դատալեքս» սերվեր և տեղեկատվական հանրային տեսավահանակներ: Ապահովում է ԴԱՀ-ի անվտանգ հեռակակապը համապատասխան Վիրտուալ Մասնավոր Ցանցի (ՎՄՑ) միջոցով, անհրաժեշտության դեպքում նախագծում նոր ՎՄՑ մոդուլներ՝ հիմնվելով Դատական դեպարտամենտի որոշակի ցանցային պահանջների վրա: Պատվիրատուի պահանջով ծրագրային կոդերի տրամադրում: Անհրաժեշտության դեպքում դատական ծառայողների համար դասընթացների կազմակերպում ԴԱՀ ծրագրի հետ աշխատելու, ցանցի կառուցվածքի վերաբերյալ և այլն: Սպասարկման տեղեկատուի ծառայություն. Սպասարկող կազմակերպությունը պարտավոր է կազմակերպել «սպասարկման տեղեկատու» որպեսզի աջակցություն ցուցաբերի ԴԱՀ համակարգի շահագործմանը				շրջանների ընդհանուր իրավասության դատարան – ք. Երևան, Մովսես Խորենացի 162ա Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 13փ. 1/1 ք. Չարենցավան, Երիտասարդության 2/1 ք. Եղվարդ, Չարենցի 29 ք. Աբովյան, Կոտայքի 8 Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան ք. Արտաշատ, Շահումյան 19 ք. Մասիս, 3-րդթաղամաս,Հերացու 26/31 ք. Վեդի,Մ.Խաչատրյան 1 ք. Եղեգնաձոր, Միկոյան 23 ք. Վայք, Ջերմուկի խճուղի 8 Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Արմավիր, Հանրապետության 41 ք. Էջմիածին, Կամոյի 15 Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Աշտարակ, Էջմիածնի խճուղի 65 ք. Ապարան, Գայի 25 ք.Թալին, Խանջյան 13 Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Իջևան, Նալբանդյան 1/1 ք. Դիլիջան, Շահումյան 15 ք. Նոյեմբերյան, Կամոյի 2	

		(սարքավորումներ, ծրագրային ապահովում, ծրագրով աշխատելու հմտություններ) վերաբերող հարցերին: Սպասարկման Տեղեկատուի Ծառայությունը պետք է առկա լինի առնվազն հետևյալ աշխատանքային ժամերին՝ 9:00-ից մինչև 18:00, երկուշաբթիից ուրբաթ: ԴԱՀ համակարգի Սպասարկման Տեղեկատուն պետք է մատչելի լինի դատարանների իրավասու աշխատողների համար: Սպասարկման Տեղեկատուի խորհրդատվությունը պետք է ապահովի՝ կիրառելով հետևյալ կապի միջոցները. Հեռախոս,էլեկտրոնային փոստ և այլն, Այցեր սպասարկման կենտրոն Տեղում սպասարկման ծառայություն Օպերացիոն համակարգի, ԴԱՀ-ի շահագործման հետ կապված այլ ծրագրային ապահովում, տվյալների վերականգնում և սպասարկում,Ծրագրերի տեղադրում, թեսթավորում,Տվյալների պահուստավորում,Խափանման հետ կապված ծառայությունների մատուցում, որոնք անհրաժեշտ են համակարգի վերականգնման, վերանորոգման և (կամ)ձևափոխման համար:ԴԱՀ-ի սերվերների սպասարկում,Ջնջված ֆայլերի և տեղեկատվության վերականգնում (հնարավորության դեպքում),Սարքավորման տեղադրում և միացում, Հեռակասպասարկում. Հեռակա սպասարկումը պետք է ապահովի հսկողությունը և արագ արձագանքը հանրապետության ողջ տարածքում բաշխված դատարաններում գործող ԴԱՀ-ի համար: Այս ծառայության կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնել ցանցի խնդիրների արագ ախտորոշում, կարգավորում, հեռակա սերվերների կառավարում, կապի առկայության նկատմամբ հսկողություն և այլն: Հեռակա ծառայությունը պետք է ներառի ԴԱՀ ցանցի սխալների հայտնաբերում, դատարանների ԴԱՀ համակարգի ծրագրային ապահովման տեղակայում, կարգավորում (ձևափոխում) և սպասարկում: Հեռակա սպասարկումը սպասարկման տեղեկատուի ծառայության հետ համատեղ պետք է իրականացվի սպասարկողի գտնվելու վայրում և ապահովի դրա անվտանգությունը, այդ թվում՝ բացառի տեղեկատվության արտահոսքը: Հեռակա սպասարկումը իր մեջ պետք է ներառի՝ Սարքավորման և ծրագրային ապահովման խնդիրների հայտնաբերում,Անմիջական դիմելու տեխնոլոգիա, Ծրագրային ապահովման տեղակայում,Սերվերների ծրագրային սպասարկում (հնարավորությանդեպքում օպերացիոն համակարգի թարմացում և փոփոխում),Պահուստային սերվերների ծրագրային սպասարկում,Համակարգի ադմինիստրացիա, Համակարգի և անվտանգության վերանայում և օպտիմալացում,Տվյալների բազայի ղեկավարում,Բազային վերարտադրման (ռեպլիկացիաների) ստուգում, Հնարավորության դեպքում տվյալների պահուստավորում:				ք. Բերդ, Այգեստան 49ա Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Գավառ, Սայադյան 18 ք. Սևան,Աբովյան 6/1 ք. Մարտունի, Շահումյան 5 ք. Վարդենիս,Լ.Ազգալդյան 2 ք. Ճամբարակ, Գ.Նժդեհ 99/1 Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6 ք. Ալավերդի, Թումանյան 8 ք. Տաշիր, Ջահուկյան 19 ք. Սպիտակ, Ալեք Մանուկյան 2նրբ.10 ք. Ստեփանավան, ՍուրբՎարդանի 53 Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2 ք. Գորիս, Անկախության 4/1 ք. Սիսիան,Գարեգին Նժդեհի 6 ք.Մեղրի, Զորավար Անդրանիկ 24/1 Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7 ք. Արթիկ, Բաղրամյան 40 ք. Մարալիկ, ՀրանտՇահինյան 198 Հայաստանի հանրապետության	

						վարչական դատարան ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7 ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 6 ք. Սևան, Աբովյան 6/1 ք. Վեդի, Արարատյան 55 ք. Կապան, Մելիք Ստեփանյան 3/2	

** *Ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրերի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 365 օրվա ընթացքում (սակայն ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը): Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:*

Ծառայությունների մատուցման գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

ԳՆՈՐԴ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փիլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դ. Անհաղթ 23/22, 0014
ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 1570003653770100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 07 » դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/05- » ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	**72261100/320**	**Ծրագրային ապահովման օժանդակ ծառայություններ** *(ծառայության մատուցումը «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին և Երևան քաղաքում գտնվող առանձնացված ստորաբաժանումներին)*	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ԳՆՈՐԴ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դ. Անհաղթ 23/22, 0014
ՀՎՀՀ՝ 01555207
Հ/Հ՝ 1570003653770100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/05» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/05» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

07.12.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՏԱԿԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/05» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 19 փետրվարի 2018թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Մանուկյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 07.12.2017թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/05» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը, կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀդատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դ. Անհաղթ 23/22, 0014
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 1570003653770100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01555207
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Մանուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված N 1
«07» դեկտեմբերի 2017թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/05» ծածկագրով պայմանագրի
19 հունվարի 2018թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261100/320	***Դատական ավտոմատացված համակարգի սպասարկման ծառայություններ***	2 315 000	2 315 000	8 102 500	8 102 500	8 102 500	13 890 000	13 890 000	13 890 000	23 150 000	23 150 000	23 150 000	**23 150 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀդատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մեյսիս Ինֆորմեյշն Սիսթեմս» ՍՊԸ
Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դ. Անհաղթ 23/22, 0014
Հ/Հ՝ 1570003653770100
ՀՎՀՀ՝ 01555207
«Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մանուկյան

(ստորագրություն)
Կ.Տ.